Հետազոտական Աշխատանք

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

Թեմա՝ «Քաջարանը իմ հայրենիքն է»

(հետազոտական-նախագծային ուսուցման փորձ)

Կազմեց՝ Անահիտ Գևորգյան

Դպրոց՝ «Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

«Կապանի N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Ինտեգրված թեմատիկ միավոր 4
Առաջնային առարկայախումբ 4
Երկրորդային առարկայախումբ 4
Սեղմագիր 5
ծրագրի սխեմա 6
Չափորոշիչներ 7
Ուղեցույց հարցեր 8
Ուսումնառության նպատակները 8
Հմտությունները 9
Կարևորությունը 9
Գնահատման ենթակա առաջադրանքներ 10
Գնահատում 10
Ռազմավարությունները 10
Հիմնավորում 11
Դասաբաշխում 12
Օգտագործած գրականություն 13

Ինտեգրված թեմատիկ միավոր

Թեմա՝«Քաջարանն իմ հայրենիքն է»

Դասարան՝ XI

Հեղինակ՝ Անահիտ Գևորգյան

Առաջնային առարկայախումբ

- պատմություն
- աշխարհագրություն
- քաղաքացիական իրավունք
- հայոց լեզու

Երկրորդային առարկայախումբ

- գրականություն
- բնագիտություն
- կրոնի պատմություն
- երգ
- կերպարվեստ
- կյանքի հմտություն

Սեղմագիր

Նախագծային աշխատանք

Նախագծային մեթոդը ք հնարավորություն են տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու համար։

Աշխատանքի հիմքում ընկած են հետևալ սկզբունքները.

- Ձևավորել ակտիվ, ինքնուրույն և կրթական գործում ակտիվ մասնակցություն ունեցող սովորողների համայնք
- Զարգացնել հետազոտական, ստեղծագործական, որոնողական հմտությունները
- Ձևավորել ինքնագնահատականը
- Ձևավորել ոչ միայն գիտելիքներ, այլ այնպիսի հմտություններ, որոնք սովորողները կկիրառեն իրենց պրակտիկ գործունեության մեջ
- Զարգացնել սովորողի ճանաչողական հետաքրքրությունը
- Ապահովել կյանք-կրթություն իրական կապը

Ընտրված թեմատիկ միավորի նյութը բխում է աշակերտների հետաքրքրություններից։ Քանի որ երեխաների ուսումնառության հիմնական դրդապատճառն իրենց իսկ հետաքրքրություններն ու հուզող հարցերն են, այս ճանապարհով ձեռք բերված գիտելիքները շատ հաստատուն կլինեն։

«Քաջարանն իմ հայրենիքն է» թեմատիկ միավորի իրականացումով աշակերտները կսովորեն գտնել, արժևորել, համադրել և օգտագործել տեղեկատվության տարբեր տեսակները։ Երեխաները դասերը հաճույքով կսովորեն, նրանցից յուրաքանչյուրի գիտելիքը կլինի կայուն ու չի մոռացվի։ Թեմատիկ միավորը

համապատասխանեցված է դպրոցի 11-րդ դասարանում դասավանդվող առարկայախմբերին։

Նախապես պետք է տնօրենի, ուսմասվարի, թեմատիկ միավորում ընդգրկված մյուս առարկաները դասավանդող ուսուցիչների հետ համաձայնություն ձեռք բերել, և թեմատիկ միավորի իրականացման նախնական դասաբաշխումը թիմակից ուսուցիչների հետ քննարկելուց հետո պլանավորել, որ աշխարհագրության, պատմության, հայոց պատմության, բնագիտության, հայոց լեզվի և գրականության որոշ դասաժամեր (օրինակ՝ կրկնության համար հատկացված ժամերը կամ այն ժամերը, որ ուսուցիչը նպատակահարմար կգտնի) պետք է տրամադրել թեմատիկ միավորի իրագործման համար։

Աշակերտը պետք է գնահատի իր ակունքները, արժևորի իրեն հասած պատմական ժառանգությունը, որովհետև վաղը ինքն է լինելու այդ պատմության շարունակողը որ միայն որպես քաջարանցի, այլ նաև որպես հայ։

Ինտեգրված թեմատիկ միավորի ուսումնական ծրագրի սխեմա



Չափորոշիչներ

Աշխարհագրություն

Աշակերտները

- կգծեն Քաջարանի տարածաշրջանի քարտեզը
- կգծեն կլիմայական գոտիների քարտեզը
- կտան բուսական և կենդանական աշխարհի ընդհանուր բնութագիրը
- կտան ջրագրական ցանցի պատկերը, կկազմեն սխեմաներ
- կծանոթանան արդյունաբերությանը և գյուղատնտեսությանը
- կիմանան ներքին պաշարների օգտագործման հնարավորությունների մասին
- կիմանան տարածքի, սահմանների առանձնահատկությունները

Պատմություն

Աշակերտները

Կիմանան՝

- ինչ հասարակություններում է ապրել Քաջարանը
- Քաջարանի տարածաշրջանի բերդերի պատմությունը
- Քաջարանի եկեղեցիների պատմությունը
- միջնադարյան հուշակոթողների մասին
- տարածաշրջանի գյուղերի պատմական ակունքները
- անվանումների ստուգաբանությունը
- հին և նոր Քաջարանի պատմությունը

Քաղաքացիական իրավունք

Աշակերտները

Կիմանան՝

- տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը
- Քաջարանի վարչատարածքային կառուցվածքը
- ընտրովի և նշանակովի ղեկավարների տարբերությունը
- ձեռք կբերեն հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունենալու գիտելիքներ և հմտություններ

Հայոց լեզու

Աշակերտները

- կկատարեն բանահավաքություն,
- կպատրաստեն հոդվածներ
- կգրեն շարադրություն

Ուղեցույց հարցեր

- Քաջարանի՝ որպես քաղաքի հիմնադրումը, ակունքները։
- Ո՞րն է այսօրվա Քաջարանի ռազմավարական նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար։
- Ինչո՞վ ենք մենք՝ որպես քաջարանցի, առանձնահատուկ։
- Ինչո՞վ է կարևոր Քաջարանի աշխարհագրական դիրքը։
- Պատմական ավանդույթներին ու սովորույթներին ծանոթացում։
- Քաջարանի պատմամշակութային արժեքների գնահատում։

Ուսումնառության նպատակները

Հասուն քաղաքացի ձևավորելու, դաստիարակելու համար շատ կարևոր է, որ այսօրվա աշակերտը գերազանց ճանաչի իր տարածաշրջանը։ Այս թեմատիկ միավորը ինքնանպատակ չի ընտրված, իսկ նպատակն այն է, որ

- աշակերտները կարողանան գնահատել իրենց շրջապատի արժեքները
- ճանաչեն պատմամշակութային հուշարձանները
- իմանան աշխարհագրական դիրքի կարևորությունը

- ուսումնասիրեն տեղի բարբառը, սովորույթները
- իմանան տարածաշրջանի ավանդույթները
- իմանան Քաջարանի հիմնադրման պատմությունը, հերոսական անցքերը
- ծանոթանան տնտեսությանը
- իմանան տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը

Հմտությունները

Դասավանդման այս ձևը աշակերտի մոտ կզարգացնի հետևյալ հմտությունները.

- ընտրել հարցեր, խնդիրներ, որոնք, ըստ իրենց, կարևոր են
- պլանավորել իրենց անելիքները, անմիջական կենսափորձ ձեռք բերել էքսկուրսիաների միջոցով և այս ձևով հարստացնել գիտելիքները
- շփվել հայտնի մարդկանց հետ
- զարգացնել համեմատելու, վերլուծելու, տարբեր արժեքներ գնահատելու կարողությունները
- ինքնուրույն կատարելագործելու սեփական աշխատանքը
- օգտվել տարբեր աղբյուրներից տեղեկատվություն ձեռք բերելու համար
- կատարել հետազոտական աշխատանք
- աշխատել համագործակցային խմբերով
- գնահատել իրենց և իրենց ընկերներին

Կարևորությունը

Այս հմտություններն ու գիտելիքները անհրաժեշտ են աշակերտներին, որպեսզի սովորեն

- ավելի լավ ճանաչել իրենց հայրենիքը՝ Քաջարանը
- ճանաչել պետական կառույցները
- գիտակցել իրենց իրավունքներն ու պարտականությունները
- պահպանել շրջակա միջավայրը

- մեկնաբանել պատմական հին և նոր ժամանակների կապը
- յուրովի մեկնաբանել գաղափարները
- գծել քարտեզներ, գծագրել
- գրել հոդվածներ, հրատարակել թերթ հայրենի քաղաքի մասին
- կազմակերպել «Ով եմ ես որպես Քաջարանցի» թեմայի շուրջը քննարկում-երկխոսություն:

Գնահատման ենթակա առաջադրանքներ

- Գծել Քաջարանի տարածաշրջանի, բուսածածկի, կլիմայական գոտիների քարտեզները
- կատարել բանահավաքություն
- նկարել Քաջարանը պատկերող նկարներ
- գրել շարադրություն, բանաստեղծություն
- գրել հոդվածներ
- հրատարակել թերթ «Քաջարանն իմ հայրենիքն է» խորագրով

Գնահատում

Կգնահատվեն տարածաշրջանը ներկայացնող

- քարտեզները, գծագրերը, սխեմաները
- շարադրությունները, բանաստեղծությունները, հոդվածները , հայրենի երկրի, Քաջարանի նշանավոր մարդկանց մասին

Ռազմավարությունները

Նշված առարկայախմբերի ժամերին կկիրառվեն համագործակցային ուսումնառության մեթոդներ, 4-5 հոգուց բաղկացած խմբերով թիմային աշխատանք, քննարկումներ, ելույթներ: Կկիրառվեն «Քննարկվող խմբեր», «Մտքեր փոխանակող զույգեր», «Նախագծային աշխատանք», «Հետազոտության աղյուսակներ», «Հարց-պատասխան փոխադարձ կապ», «Հարցեր հեղինակին», «Ֆրայերի մոդել» և այլ մեթոդներ ու ռազմավարություններ:

Հիմնավորում

«Քաջարանն իմ հայրենիքն է» թեմատիկ միավորի արդյունքում

- աշակերտները կուսումնասիրեն Քաջարանի աշխարհագրական դիրքը
- կգծեն տարածաշրջանի քարտեզը
- կքննարկեն տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը
- կքննեն շրջակա միջավայրի պահպանման հարցը ՝ քննարկելով նաև տեղական իշխանության և կառավարության դիրքորոշումը
- կբացատրեն Քաջարանի տնտեսության զարգացման համար բնական ռեսուրսների օգտագործման նշանակությունը
- կգնահատեն Քաջարանի տնտեսության զարգացումը
- կկազմակերպեն էքսկուրսիա Քաջարանի պատմամշակութային հուշարձանները,
- կիմանան տարածաշրջանի եկեղեցիների պատմության մասին, կգծեն իրենց տոհմածառերը,
- կկատարեն բանահավաքի աշխատանք՝ գրի առնելով Քաջարանի, նրա տարածքի մասին պատմող զրույցներն ու առասպելներ
- կպատրաստեն հոդվածներ, կգրեն շարադրություններ
- կնկարեն Քաջարանը պատկերող նկարներ
- կհրատարակեն թերթ։

Դասաբաշխում

h/h	Թեմայի անվանումը	Ժամաքանակը
1	Քաջարանի աշխարհագրական դիրքը։ Լճերը, գետերը, լեռները, գյուղերը	2 ժամ
2	Բնական պաշարները, տնտեսությունը։	2 ժամ
3	Քաջարանի՝ որպես քաղաքի հիմնադրումը։ Հին ու նոր Քաջարանը։	3 ժամ
4	Տեղական իշխանության ձևավորումը, առևտուրը, արհեստները, արվեստը և մշակույթը։	3 ժամ
5	Քաղաքացիական իրավունք։	2 ժամ
6	Էքսկուրսիա դեպի Քաջարանի տարածաշրջանի պատմամշակութային հուշարձանները։	ժամ
7	Քաջարանի տարածաշրջանի եկեղեցիների պատմությունը։Կրոն։	2 ժամ
8	Լեզու և գրավոր խոսք։(Քաջարանի բարբառը)։ Հին ավանդույթները, սովորությունները և տոները։ Քաջարանի հիմնը։	4 ժամ
9	Քաջարանի և նրա տարածքների մասին պատմող զրույցներ և առասպելներ։	2 ժամ
10	Տեղական ինքնատիպ բաղադրատոմսերի հավաքում, ներկայացում (ճաշատեսակներ, չրի, պահածոների պատրաստման յուրահատկությունները)։	2 ժամ
11	Տոհմածառի կազմում։	2 ժամ
12	Հանդիպումներ Քաջարանի հայտնի մարդկանց հետ։ Հոդվածների պատրաստում։	3 ժամ
13	«Ո՞վ եմ ես որպես քաջարանցի» թեմայով քննարկում։	2 ժամ

Օգտագործած գրականություն

1. «Կրթադաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և նոր ինտեգրման մոտեցումներ», Երևան Այրեքս-2002թ. , Քրիստի Դանլափ
2. «Համագործակցային ուսուցում», Ձեռնարկ Երևան 2006թ. հեղինակ Կ. Հարությունյան
3. «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդ դարի մանկավարժություն», Երևան 2005
4. «Թեմատիկ միավորների ժողովածու» Ձեռնարկ, Երևան 2005, համահեղինակ՝ Անահիտ Գևորգյան